NEWS RELEASE

Համաշխարհային Բանկի ուսումնասիրությունը փաստում է՝

Հայաստանում աշակերտների շրջանում զգալի հաջողություններ են գրանցվել կրթական ծրագրի բարեփոխման արդյունքում

Երևան, փետրվարի 23 – Համաշխարհային Բանկի կողմից հրապարակված նոր ուսումնասիրությունը, որը գնահատում էր Հայաստանում իրականացվող կրթական ծրագրի բարեփոխումները, ցույց է տալիս, որ այն աշակերտները, ովքեր երկամյա պիլոտի շրջանակներում սովորել են նոր ծրագրով, զգալի հաջողությունների են հասել թե՛ մաթեմատիկայի, թե՛ բնագիտական առարկաների ուղղությամբ, ինչը համարժեք է վեց ամսվա լրացուցիչ ուսումնառության:

2018թ-ին Հայաստանը նախաձեռնեց կրթական համակարգի հավակնոտ բարեփոխում գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) առարկաների մասով ու թեև բարեփոխման գործընթացը դեռևս չի ավարտվել, մինչ օրս գրանցված առաջընթացի գնահատումն արժեքավոր փորձ է ներկայացվում, որը կարող է էական ներդրում ունենալ կրթության բարեփոխումների իրականացման մասին գիտելիքների գլոբալ շտեմարանում: «*ԵՄ-ն հանուն նորարարության» հավատարմագրային հիմնադրամի* աջակցությամբ Համաշխարհային Բանկը համագործակցեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ բնագիտական (STEM) առարկաների կրթակարգը 1-12-րդ դասարանների համար մշակելու և պիլոտն իրականացնելու համար՝ կենտրոնանալով աշակերտակենտրոն ուսուցման մեթոդաբանությունների և դասավանդման մեթոդների վրա:

«*Կրթական ծրագիր և ուսումնառություն. կրթական ծրագրերի բարեփոխումները Հայաստանում. անցումը կարողունակությունների վրա հիմնված գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) կրթական ծրագրերին*» խորագրով զեկույցը նկարագրում է կրթակարգի բարեփոխման գործընթացի չորս հիմնական շարժիչ ուժերը՝ 1. հստակ սահմանված շրջանակներ, 2. դասավանդման և ուսումնական բարձրորակ նյութեր, 3. մասնագիտական զարգացում և 4. ուսումնառության գնահատում: Հայաստանում իրականացվող ծրագրի փորձից ելնելով՝ ի հայտ են գալիս մի քանի համապատասխան ուղերձներ կրթակարգի բարեփոխման լայն օրակարգ ունեցող այլ երկրների համար:

Այս դասերից **առաջինը** տեղական գիտելիքը ձևավորելու և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի ինտեգրման արժեքն է՝ կայուն կարողություններ ձևավորելու նպատակով: **Երկրորդը** ուսուցման և ուսումնառության նյութերի տրամադրումն է, որն արդյունավետ կերպով աջակցում է նոր կրթակարգի իրականացմանը, պահանջում է իրատեսական և լավ պլանավորված ժամանակացույց և պետք է ներառի օգտվողների համար հետադարձ կապի

մեխանիզմ: **Երրորդ՝** ուսուցիչների և վարչարարների կողմից նոր կրթակարգն իրականացնելու համար բարձրորակ վերապատրաստման ապահովումը շատ կարևոր է, սակայն շարունակական մենթորությունը հավասարապես կամ անգամ ավելի կարևոր է: **Չորրորդ՝** աշակերտների գնահատման լավ մշակված մոտեցումը, որը Հայաստանում բարեփոխումների մաս է կազմում, օգնում է, որպեսզի ուսումնական ծրագրերի բարեփոխումը հաջողի: Վերջապես, բարեփոխումների գործընթացը հաջողում է, երբ այն հիմնված է տվյալների վրա և իտերատիվ բնույթ է կրում:

«Կրթական համակարգի բարեփոխումը հանդիսանում է ամենաբարդ բարեփոխումներից մեկը, որն երկիրը կարող է նախաձեռնել: Սակայն արդյունքներն էլ էական են: Հայաստանի Տավուշի մարզում իրականացրած պիլոտի գնահատումը ցույց է տալիս, որ բնագիտական (STEM) առարկաների համար նոր կրթակարգը էապես խթանում է ուսումնառությունը՝ համարժեք լինելով կես տարվա լրացուցիչ ուսումնառության: Այս բարեփոխումը երիտասարդների համար հսկայական խթան կհանդիսանա՝ ապագա կարիերայի լայն հնարավորությունների իմաստով, այդ թվում նաև բարձր պահանջարկ ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, ճարտարագիտությունը, ՏՀՏ-ն և այլն»,- ասաց **Համաշխարհային Բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինաթը**:

«ԵՄ-ն հանուն նորարարության պիլոտային ծրագրի» բնագիտական առարկաների պիլոտի արդյունքում Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցներ այժմ ունեն լիովին հագեցած քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և ՏՀՏ լաբորատորիաներ:

Համաշխարհային բանկը ներկայումս Հայաստանում ֆինանսավորում է 500 միլիոն ընդհանուր արժեքով 10 ծրագիր: Հայաստանում 1992 թ. -ին իր գործունեության սկզբից ի վեր Համաշխարհային բանկը շուրջ 2.7 միլիարդ դոլար է տրամադրել Միջազգային զարգացման ընկերակցությունից (ՄԶԸ), որի դոնոր Հայաստանը դարձավ 2023 թ.-ին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) և հավատարմագրային հիմնադրամներից: Համաշխարհային բանկը հանձնառու է շարունակելու իր աջակցությունը Հայաստանի զարգացման ուղուն՝ վերջ դնելու ծայրահեղ աղքատությանը և խթանելու ընդհանուր բարգավաճումը ապրելու մոլորակի վրա:

Պատասխանատուներ՝

Երևանում՝ Հասմիկ Սողոմոնյան, hsoghomonyan@worldbankgroup.org - Tel: +374 91291300

Վաշինգտոնում, Կ.Շ. Սոնա Փանաջյան, spanajyan@worldbank.org /Tel: +1 202 473 9751

Մամուլի հաղորդագրություն 2024/ԵԿԱ/067